



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1238

248  
—  
D - 20

1876

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

# ՔՐԻՍՏՈՆԵՒԹԻՒՆ

ԳԻՂԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՎԱՂԱՔԸ

(6)

Խնամ ոք միտ հաս հայութ ուղար շանխն ու հասու  
հանդեց լաւը կը պատահն ։ (Եպ. Ժ. 4. 14.)

Զմիռուսիս

ՑՊԵԴՐՈՒԹԻՒՆ ՑԷՏԵԵՆ

1876

248  
Հ - 20

Հ 900 1

2010

248  
Ճ-20

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

# ՔՐԻՍՏՈՆԵՒԹԻՒՆ

Գիր կ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ՔԱԳԱՅԻ

12012

Ինչու ո՞յ Թե՛ հոս մասունք ժաղախ շատնի՞՛, հապա  
հանդերձեալը կը դնունի՞՛: (Եբր. Ժ. 44)

Զմիշոնիս

ՑՊԵԳՐՈՒԹԻՒՆ ՑԿՏԵԸՆ  
1876

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

# ՔՐԻՍՏՈՆԵՒԹՅ

Թիգ 1 ՀԱՆԴԵՐՁԵԱ. ՔԸՆ.Ա.ՔԸ

Խնչու որ մենք հոս մնայուն քաղաք  
չունինք, հապա հանդերձեալը կը  
փնտո ենք: Եթր. Ժ.Պ. 14:

ՔՐԻՍՏՈՆԵՒԹՅ կեանքը աս աշխարհիս մէջ շատ  
անզամ ճամբորդութիւն կ'ըստոի, կամ մէկ պանդխտու-  
թիւն մը, և որն որ աս փոխարերութեամբ կը ցոյցոի  
մեղի Սուրբ Գրոց մէջ: Ինչու որ +ու առջերդ պահպահու-  
թը էմ էս, կ'ըսէ Գաւիթ Լթո: Սաղմոսին մէջ, և հեր-  
ժը իմ նախնինեռուս պէս: Ու Առաքեալն ալ կը հաս-  
տառէ մեղի մեր բնաբանին խօսքերովը թէ Մէս+ Հո-  
մայուն+ +աղա+ շունին+, հաղոտ հանդերձեալը էը Քնորուն+:  
Պէտք էր որ մենք շատ անդամ աս կարեոր Ճշմարտու-  
թիւնը յիշէինք, իբրև մէկ մտածութիւն մը որ շատ  
կ'օդնէ մեղի և որն որ մեր յօժարութիւնները այս ու-  
նայն և անցաւոր աշխարհէս կը գտարձնէ, և կը հաս-



39134-67

52429-66.-1.

տատէ զանոնք Աստուծոյ և երկնային բաներու վրայ :  
Ուստի մեր բնաբանին խօսերը մտածելով քննենք :

Ա. Մենք հոս մնայուն քաղաք չունինք .

Բ. Եւ ուրիշ զալիք քաղաք մը ունինք .

Գ. Քրիստոնեաները նոյն հանդերձեալը կը փնտռեն :

Եւ Ան որ ըստ թէ Եւր հանչը առ ո՛չ , պերունակութիւն պատճեն ըլլայ , (Մատթ. Զ. 21): Երանի թէ մեր սիրաերը և յօժարութիւնները զզայական և ժամանակաւոր բաներէն կորզուէր , ու երկնային բաներու վրայ հաստատուէր , երանի թէ մեր զանձը երկինքը ըլլար և մեր սրաերն ալ հօն ըլլային :

Ա. Մենք հոս հայուն գաղուն շանչն կըսէ Առաքեալը :  
Եւ խոհական միտք ունեցողը գիւրաւ կը հասկընայ թէ ինչ ըսել կ'ուզէ : Ապաքէն քանի փոփոխութեան ենթակայ են բոլոր երկելի արարածները :

Գարնան ժամանակը՝ Տէրը իր հոգին կը զրկէ և երկրին երեսը կը նորոգուի , կարծես թէ բնութիւնը յարութնան տօն մը կը կատարէ , ան որ ձմեռուան ամփաներուն մէջ մեռած էր՝ դարձեալ կենդանութեամբ՝ ի դործունէութիւն կը հրաւիրէ : Խարքը շնուռով ամառուան թառամեցոցիշ ջերմութիւնը կու դայ , և բնութիւնը աւելի նշանաւոր երկոյթ մը կ'ունենայ : Գարնան առոյգ կանանչութիւնը հետզետէ կը կորսուի , ծաղիկները կը թառամին , և պտուղները կ'ըսկին հասունաւ : Հնձոց ժամանակը կը հանի և Աստուծոյ պարգևները առատութեամբ կը տարածուի , և մարդիկ սոյն օրհնութիւնները իրենց Արարշին ձեռքէն կ'ընդունին ,

և կը կանչուին՝ ինչպէս ամեն ատեն նոյնպէս ալ հիմա օրհնելու զԱստուած իր պահպանութեանը և բոլոր այս կինաց օրհնութիւններուն համար : Բայց ահա ծառին պատւները փրցուածին պէս , անոր տերենները կ'ըսկին թառամիլ և թափիլ , և մեր պարտէզներուն թառամալ տերենները մեր ուաքերուն տակը կոփուելով մեր կենաց կարձութիւնը և տնայնութիւնը միտքերնիս կը ձգեն :

Նորը ձմեռը կու դայ , բնութիւնը մահուան տագնանակի կերպարանք մը առած , մեռելի պատանքի նման ուրիշ կլիմաներու մէջ . զինքը եղեամի և ձիան սպիտակ հաղուստով ծածկած , մարդուս միտքը կը ձգէ մահը և զերեզմանը : Այսպէս շարունակ տեղի ունեցած փոփոխութիւնները որոնց տարուէ տարի ենթակայ ե բնութիւնը , մեղ՝ մեր բնաբանին ըստածները բարձրաձայն կը քարոզէ թէ՝ Որդիկ մարդկան , դուք հոս մնայուն քաղաք չունիք :

Տեսնելով որ արեին տակը տեական բան մը չկայ , վերցընենք աչքերնիս գէպ՝ ի երկնից հաստատութեան : Ահա արեք , լուսինը , և անթիւ աստղեր , որոնց շատերը հազարաւոր տարիներէ ի վեր իրենց շրջանին մէջ կը շարժին , երբ ուրիշները հաստատուն կեցած են տիեզերաց ընդարձակութեան մէջ Ամենակարողին ձեռօք :

Ասոնց վրայով զուցէ մէկը խորհի թէ՝ փոփոխութեան ենթակայ չեն . բայց մենք կը բանանք Աստուծոյ պարգևները առատութեամբ կը տեսնենք որ Սաղմոսերուն կ'ըսէ Երինքը +ու յերւերուո՞ հործո՞ն է : Անոնդ ուիրէ կ'ը-

առաջ տուն պէտք էւնաս , ու անոնց աղենը լուիտ պէտք մաշին . հանդերձէ պէտք պէտք ժոխէս զանանք , ու պէտք ժոխունէն (Սաղմ. ՇԲ. 25—26) : Ու ներշնչեալ Առաքեալն ալ մարքերնիս կր ձգէ թէ՛ Տէրովը օրը ժողի պէտք ժոյ որ ու արքէն երիւնիւը ասսորիէ շարաւինով պէտք անցնի , ու դարձերները բաւշնիւծ պէտք լուծունին , երիւս ու ինչ ժողունէր որ անոր մշւն էր ժողունին պէտք այրունին : (Բ. Պետր. Գ. 10) : Արդ՝ այս ամեն բաները որ պիտի կորնչին , որչափ մծ գաս մը կու տան մեզի , որ ասիկայ է թէ՛ Որդիք մարդկան , դուք հոս մնայուն քաղաք չոնիք :

Եղագարք՝ կրնանք նաև խիստ աղդու և դիրիմանալի ուրիշ ձայն մըն ալ լսել որ շարունակ մեզ կ'ըսէ . թէ մենք հոս մնայուն քաղաք չոնինք : Աս ձայնը՝ բուն հարդուու իւնանին է : Ուր են այն հազարաւոր և միլիոնաւոր մարդիկերը որոնք աշխարհիս սանելծուելն ՚ի վեր զյութիւն ունեցան , անոնք զերեղմանին մէջ խորասոյզ եղան : Ուր են այն մնծ և հզօր թագաւորները , բունաւորները և մարդոց հարստահարողները , որոնց համար զուցէ աշխարհս փոքր զունտ մըն եր իւնեց փառասիրութեան խորհուրդները յազեցընելու համար , երկիրներու և ազգերու տիրելով : Եւա՛ղ փառքը և զօրութիւնը որոնց բոլորտիքը շրջապատճ էր , սակայն և ոչ գայզն պաշտպանութիւն կրցան ընել անոնց մահուանը գէմ , և անոնք որ հազարաւոր մարդոց տիրեր էին , վերջապէս իրենց ալ արհաւրաց թագաւորը այսինքն մաշը տիրեց : Ուր են նախկին իմաստասերները , բանաստեղծները , և ատենաբանները , որոնց

դրուածներուն վրայ իրենց ժամանակակիցները կր հիանային , և հիմա ալ որոնց վրայ հիացած կր կարդան և կր սորվին զանոնք հազարաւոր անձինք : Անոնց անունները միայն մնայցեր են պատմութեանց է ջերուն կարգը , և անոնց մարմինները հող և մոխիր գարձած են : Դարձեալ առ կր հարցնենք , ուր են նախկին սուրբերը , նահապէտները և մարգարէները , Քրիստոսի Եկեղեցւոյն Առաքեալները ու մարտիրոսները ամեն մէկ գարուն : Ուր են Քրիստոսի Ճշմարիտ Հետևողները , որոնք մեզմէ առաջ կ'ապրէին , և որոնց կեանքք պահուած է Աստուծոյ քովը Քրիստոսի հետ (Կոլ. Գ. 3) : Անոնք կր ննջեն ահա զերեղմանին մէ ջը , յարութեան ան մեծ օրուան սպասելով , և իրենց լուռ դամբաններէն բարձրածայն կր քարոզն մեր ականջներուն , թէ՛ Որդիք մարդկան , դուք հոս մնայուն քաղաք չոնիք :

Բայց անդամ մըն ալ ինքզինքնուու դառնանք , ո՛չ , մենք ալ հոս մնայուն քաղաք չոնինք : Ինչու որ՝ քանի մը սրբնթաց տարիներէն , ամիսներէն կամ օրերէն ետքը , մեր վերջին ժամը պիտի զայ , Մէր առընթելը յնորդէն ու պէտք ի անցընենի : Մէր առընթելուն օրեւը եւունենաւան դարէ են , ու նէ որ զբութիւնն ունեսուն դարէ ըլլան , դաշտակին անոնց ժամանուն ու շատ է , ինչու որ անոնց շատուն ի անցնին , ու մէն կը նուշնի : Ասիկայ Մովսէսին վկայութիւնն է 90Երորդ Սաղմոսին մէջ :

Ավեն մարօնն իսոր է , ու անոր բուլը վայելունիւնը դաշտէ ծաղկէնն պէտք է անոր պէտք է , իսորը կը արենա : Զաշիւլ էւ նուստամի , երբոր անոր վրայ Տէրովը հովը էւ իւլ , երաշոյնէ ժողովուրդը

իսութ է : Խառը և շրնչայ , հառելիք և բարեկամ է : Կ'ըսէ Տէրը Եսայի մարգարէին բերնովը , (Եսայ . Խ . 6—8):

Բայց ինչպէս նոյն մարգարէն հճա առիթով մը կը հարցընէ , մնք ալ հոս կը հարցընենք , Ո՞վ հաստատ մէր ուստած լուրին , առ Տէրովը բառուի որու յայդունեցաւ , (Եսայ . ԾԳ . 4): Ով մափի կ'ընէ Տէրոջը ձայնը՝ որ այսքան բարձր ձայնով կը քարոզէ բոլոր երկրաւոր բաներուն կարճատե ըլլալուն վրայօք : Զե՞նք տեսներ ամբարտան մեղաւորներուն բազմութիւնը , որոնք այս աշխարհիս մէջ , ամենենին ապագան չհովալով կ'ապրին : Շատեր կան որոնք չեն ծածկեր իրենց անհաւատութեան սկզբունքները , և որոնք կը խորհին , կ'ըսեն և կ'ընեն անսանկ բաներ որպէս թէ Աստուած չկայ , և որպէս թէ՝ Աստուածաշունչին դատաստանի օրուան՝ նաև երկինքին ու դժոխքի վրայ մեզի ըսածները , լոկ առասպելներ են :

Եւ աշա ասոնք են ասոնց ըսածները , Պւաենք , խմնք , վայելնք , քանի որ աս կեանքը ունինք , ինչու որ վազը կը մեռնինք : Անոնք չեն կրնար ուրանալ բոլոր երկրաւոր բաներուն անցաւորութիւնը , բայց յափառենական բաներուն ալ չեն հաւատար , և կը փնտուն ու կը գտնեն իրենց բաժինը միայն հոս երկրի վրայ : Աս աշխարհը՝ մարմինին ցանկութիւնովը , և աչքերուն ցանկութիւնովը և կեանքին գոռոզութեամբը , առ աշխարհը՝ իրեն բոլոր ուսայնութիւններովը , հարստութիւններովը , պատիւններովը և հեշտութիւններովը , առ աշխարհը՝ իր կարծիքն առաքինութիւններովը և իրական մեղքերովը

Աս աշխարհը՝ բաւական է անոնց , անոնք ասկէ աւելին չեն ուզեր :

Կան ուրիշները՝ որոնք կը հաւատան Աստուածաշունչի վարդապետութեանը և մոտադիր են ծանրութեամբ մը կրօնի պատուիրանքներուն , նաև կը խոստովանին ալ որ հոս մայուն քաղաք մը չունին : Մտատանջութիւնով և երբեմն աչքերնին արցունքով լցուած կը տեսնեն , որ՝ բոլոր երկրաւոր բաները ինչպէս անցաւոր են , և շատ անգամ արեկն մարը մտնելը , որ իրենց կենացը մէջ կը տեսնեն , իրենց կեանքին վաղանցիկ երջանկութիւնը կը յիշեցընէ . նաև կը տեսնեն անոնք իրենց քաղցրագոյն յոյսերու պարապը ելնելը , և մէկ երկրաւոր զուարծութիւն մը դալուն՝ միւսը անոնցիկ հեռացած ըլւլը : Մահը անոնց ընտանեացը վրայ զալով , սիրելի այրը կամկինը , սիրելի ծնողը կամզաւակը , զորովալվելց եղայրը կամ քոյրը , կամ հաւատարիմ բարեկամը կը մտնեն շուտով արագահաս գերեզմանին մէջ : Ռւղեւորը աս աշխարհիս ամայի անսպատին մէջ Ճամբան շարունակելէն կը գաղրի , ու խոռովութեան կոհակները և ձախորդութեան ջուրերը կու զան անոր զլխուն վրայ . առողջութիւնը և ուժը և ուրիշ ամեն երկրաւոր միխթարութիւնները շուտ մը կը փախչին : Ան շատ ալդէ կը տեսնէ և կ'զգայ հիմա , որ Հոս մայուն գաղատ ճը վանէ : Աս աշխարհը իր անմաշ հողւոյն բաղձանքը չլեցըներ , վասն որպէս կը փափաքի և կ'ուղէ խիսա լաւագոյնը որ պիտի զայ :

Երանելի է ան , եղբարք , որ այսպէս անկէ կ'առաջ-

նորդուի , նա միայն կարող է մեր անմահ հողիներուն փափաքը լեցընել : Երանի անոր որ այս աշխարհի ծակոտ ջուրի գուրերը կը թողու , ուսկից մեղաւորաց սրտերուն մէջ սոսոյդ միիթարութեան մէկ կաթիլն անդամ չիջնար : Երանի անոր որ յոդնած ու բեռնաւորած կ'երթայ Անոր՝ որ կ'ըսէ . Ես յեւ իւ հանդէլունք : Երանելի է ան՝ որ քաղցած ու ծարաւցած կենաց ջուրերուն աղբիւրը կը գիմէ : Երանելի է ան մարդը՝ որ կարող է սառուդիւ բսել Դաւթի հետ . Կէնաց աղբէւրը ու ու վունք է , ու լուսունք լսու պիտի ուենենք . (Սալմ. 1. Զ. 9) : Եւ սուրբ Պետրոսի հետ՝ Տէր՝ որու պիտի երնանք , ու ու յաւելունակն էնաց խօսւեր ունիս . (Յովհ. Զ. 69) :

Բ. Այսու իմ սիրելի բարեկամներս , երանելի է այն մարդը՝ որ Ճշմարիտ հաւատով և հասաւուն յուսով վերոյիշեալ խօսքերը կրնայ ըսելու : Վասն զի թէ պէտև մարդը կը խօստովանի՝ թէ ինքը հոս մնայուն քաղաք մը չունի . բայց գիտէ , կը հաւատայ ու ապահով է թէ զալու քաղաք մը կայ , և այժմէն ալ ձեռք բերած է այն քաղաքակցութիւնը , որ դէպ 'ի հոն՝ իր իր յաւիտենական առնը կ'երթայ :

Ներեցէք՝ որ վայրկեան մը մենք ալ ընկերանանք քրիստոնեայ ուղևորին իր Ճամբուն մէջ , և տեսնենք թէ ինչ զգացումներով , ինչ բաղձանքներով , և ինչ յոյսերով անիկա քաջալերուած է այս աշխարհիս Ճամբորդութեան մէջ : Ին Ճամբան՝ որուն վրայէն կ'անցնի , նեղ Ճամբայ մ'է , աջ կողմը և ձախ կողմը ու ու իմ Ճամբան կան , և նոյն Ճամբայէն զացողը թէ

որ հոգ չտանի նեղ Ճամբուն մէջ կը մոլորի , նաև տատանիներն շատ անդամ կը վիրաւորեն յոգնած ուղևորը . անիկա կ'անցնի կ'երթայ անանկ երկրի մը մէջն՝ ուր տեղ երկելի և աներեւոյթ թշնամիները՝ շարունակ անոր յառաջադիմութիւնը արդիւլու կը փորձեն . օրուան տաքը ու ծանրութիւնը զանիկա սաստիկ կը նեղն . մութ կայ անոր առջեր , և շատ անդամ ալ խիստ դժուարին է անոր այս Ճամբայէն չմոլորիլը :

Բայց մի կարծէք , եղբարք , որ ասանկ ուղևոր մը երջանիկ չէ իր Ճամբուն վրայ , քանզի մէկ աներեւոյթ ձեռք մը կ'առաջնորդէ զանի , այն ձեռքը՝ որ երբեմ իրեն համար խաչին վրայ բենուցաւ , այսինքն ամենակարող Փրկչին ձեռքը : Այս ձեռքը կ'առաջնորդէ զանի անվանեց . իր Ճամբորդութիւններուն մէջն՝ Անոր Ճամբան շիտակ է և կ'երթայ այս աշխարհիս անապատին մէջն գէպ 'ի հոն , ինչու որ՝ Հոս մնայուն քաղաք մը չունի հասկա հանդերձեալը կը փնտուէ : Անիկա այնպիսի քաղաք մը կ'երթայ՝ որ յաւիտենական հիմունք ունի , և որուն Ճամբարապակիտը և շինողը Աստուած է : Բայց կրնայ մէկը հարցընել , թէ արդեօք քրիստոնեայ ուղևորը ինքզինքը չխարե՞ր : Եր յոյսը հիմնաւոր է՝ որ ապահով և աներկիւղ ըլլայ : Ինչ պիտի ընէ՝ թէ որ վերջապէս ինքզինքը խարուած զանէ : 2է , եղբարք , անհնար է որ անանկ ըլլայ : Քրիստոնէին յոյսը աւաղի վրայ հիմնուած չէ , այլ յաւիտենական վէմին վրայ՝ որ նոյն ինքն Աստուծոյ և անոր անզին խոստ-

մռնքներուն վրայ՝ հաստատուած է : Քրիստոնեան զիշտէ թէ Որու կը հաւատայ , և համազարած է ո՞ւ Աստուած իրայ պահել էր և առաջուած բաները մնալ այն օրը . (Բ. Տիմ. Ա. 42): Ի՞նչ որ Սուբբ Գիրքը կ'ըսէ իրեն Աստուծոյ թագաւորութեանը վրայօք՝ հաստատապես կը հաւատայ : Անիկա կը հանջնայ աս Տէրութեան թաղաւոր՝ Տէր Յիսուս Քրիստոսը , որ իր կեանքովը , չարչարանքովը , մահուամբը , յարութեամբը և համբարձմամբը անոր իր օրհնեալ թաղաւորութեան դուռը բացած է : Անիկա կը հաւատայ որ՝ Յիսուս Քրիստոս է համբան , ճշարդութեալ ու իւան+ը , և ին մէջ Հօրը ուշ աւարք , ենէ ու Անուլ : (Յովէ. Ժ. 6): Վասն որոյ իր փրկութեանը համար ո՞չ թէ իր յատուկ արդարութեանը և արժանաւորութեանը կ'ապաւինի , այլ մի միայն Քրիստոսի կ'ապաստանի , և անիկէ դուրս Աստուծոյ թագաւորութեանը մտնելու . ոչ որ կ'արժանաւայ : Իր աչքը մնկած կը նայի շարունակ հաստօքին առաջնորդին ու կատարողին Յիսուս Քրիստոսին . (Երր. Ժ. 2): Որ կը զօրացընէ զանիկա իր տկարութեանը մէջ , կը միխթարէ նեղութեանը մէջ , և անոր օփերը իր յաջողութեան օրերուն մէջ ուրախութեամբ և զոհութեամբ կը լեցընէ : Քրիստոնեայ ուղեռը առանց Քրիստոսի բան մը չկրնար ընել , բայց ամեն բան Քրիստոսով կրնայ ընել որ կը զօրացընէ զինքը : Մեր փրկութեան Առաջնորդը իր չարչարանքովը կատարած՝ և իր փառաւոր թագաւորութեանը մէջ չարչարանքովը մտած է . (Երր. Բ. 40):

Եւ ասիկա է իր աշակերտաներուն և հետեղողներուն եղած Ճամբան . Աշխարհի մէջ նեղաբեկիւն ուիտի ունենաւ , ըստ Քրիստոս իր աշակերտաներուն , բայց առջասիրո եւ չէտ , ևս աշխարհին յաղթեցի : (Յովէ. Ժ. 33): Սիրուենիդր չւառակի , Ասպառաջ հաւատապացիկ , ինձի ալ հաւատապացիկ : Իմ հօրու պառակը շատ բնակարաններ իւն , առա ին ուն էս յեղի պայտ ըսէի . Հիմա իւրիւմ ու յեղի ուղղ կը ուղարկածում : Ես նէ որ Երեմայ ու յեղի ուղղ ուղարկածում , նորին իսու քայր և յեղ ուղղ իւսնեմ , որպէս զի մոր որ ևս էմ՝ դուռ ալ հան ըւլսու : (Յովէ. Ժ. Դ. 1—3): Ես ահա ամին օր էս յեղի հետ ևս գնալ աշխարհին վերջը . (Մատթ. Ի. Բ. 20): Անի բնակերը բարին գործադից իւլլուն անոնց՝ որ Աստուծ իւս սիրեն , որոնին անոր նախասահմանանութեանը կանչւած էն : Թէ որ Աստուծ մէր իւրին է՝ ո՞ւ պէտի ըւլսու մեցի հակառակի : Ան որ իր Որդուն մինայէց , հայու մէր ամենամ համար մասնակց զննիս , աւ ինչպէս անոր հետու ամին բաները մէջի պարբերու : Ո՞ւ է որ Աստուծոյ ընդունաներուն ուշի մեղմութիւն ըւլսու : Աստուծի որ իւրուրացնէ : Ուրեմն ո՞ւ է որ կը դարձապարուտ , Քրիստոսն է ար մէտաւ , և անապանդ ին յարութիւն ալ արաւ , ու Աստուծի աջ իսպնէ է . որ նաև մէջի համար բարին օստանը իւնէ : Ուրեմն ո՞ւ պէտի ըւլսու մէջ Քրիստոսի սիրեն , դաստա պանուց կամ նեղանելիւնը , կամ հալածանելը , կամ սո՞վը , կամ մերիւնիւնը , կամ զրանիւնը , կամ սո՞րը . — աս ամին բաներուն մէջ ալ աւելէ յաշնուղ իւլլուն անոնց որ մէջ սիրեն : (Հովով. Բ. 28—37): Ինչու որ մէր վայրէնական ընըլւ նեղանելիւնը իւսու մէջ ու շահապաց իւսուի յաւիրենական առաւելութիւնն էս քործէ մէսի : Առան զի մէն երեցած բանը .

բուն չեն նայէր, հապա չերևածներուն, ինչու որ երեցաշ  
բնելը ժամանակառ էն, բայց չերևածները յա-կունական .  
(Բ. Կորնթ. Դ. 17—18): Քրիստոնեայ Ճամբորդը՝  
Քրիստոսի և ասոր Առաքեալներուն ու Մարզարէներուն  
այսպէս և ասոնց նման խօսքերովը կը զօրանայ և կը  
մփիթարուի իր Ճամբուն վրայ, որ զինքը գէպ ՚ի յա-  
ւիտենականութիւն կը առնի: Բայց մէկ մթիւն ու աչեղ  
ժամ մը տակալին կը սպասէ անոր, կ'ուղիմ ըսել ա-  
նոր մեկնելու ժամը, մահուան ժամը: Սակայն այս  
ժամը՝ որ այնքան աչարիու է անհնազանդ և անհաւատ  
մարդոց, իսկ ՚ի մասին Ճշմարիտ Քրիստոսի հաւատա-  
ցողին առջե՝ իւր արհաւարքը կը կորսնցընէ: Անիկա  
կարող է Ճշմարտապէս ըսել Առաքեալին հետ, Ինչէ  
համար՝ ապրէլը Քրիստոս է ու Եւրելը օգոստու: Մէնիկը ու  
Քրիստոսի հետ ըլլալու ժամանակը, անոնք ան՝ շաբա ա-  
ռելի առէն է. (Փիլիպ. Ա. 21—23): Ուր է ո՛վ ան՝ ու-  
խայնոց, ուր է ո՞վ ժերեզան՝ ուշադիւնիւնդ: Բայց ժո-  
համբիւն Ասուունոյ, որ Ձեզէ յաշնունիւն կու ուսոյ Ձը Տէր  
Յէսուս Քրիստոսի յետունը. (Ա. Կորնթ. ԺԵ. 55—57):  
Յիշաւի ասոնք յաշնահակու հաւատքին խօսքերն են, Ա-  
ռաքեալի մը խօսքեր են, բայց սակայն յաղթութիւնը՝  
որով Քրիստոս բոլոր մահուան ու զերեզմանին յաղ-  
թեց, կը մփիթարէ Քրիստոսի հաւատացող խիստ տկա-  
րը, ինչպէս որ կը մփիթարէ Առաքեալ մը, նաև կը  
մփիթարէ խիստ երեւլի սուրբը: Խղբարք, Ճշմարիտ  
Քրիստոնէի մը մահուան անկողնոյն քով կեցէր եք եր-  
բէք, տեսած եք զանիկա իր վերջին վայրիկաններուն

մէջ, լսած եք անոր գողովզուն շրթունքէն հաւատքով  
օրհնութիւն և գոհութիւն մատոցուած՝ ուրախութեան  
և խաղաղութեան հատկանալ ձայնը: Ո՛չ, թէ որ ա-  
կանատես եղած եք այս բաներուն, ուրեմն զիակէք թէ  
Ճշմարիտ քրիստոնեան ինչպէս երջանիկ կինայ մոռ-  
նիլ: Ահա ընկերացանք քրիստոնեայ Ճամբորդին իր Ճամ-  
բուն վրայ այս աշխարհիս մէջ: Յայանի է որ անի-  
կա հոռ մնայուն քաղաք մը չունի, հապա կայ ուրիշ  
քաղաք մը որ գէպ ՚ի հոռ Ճամբորդութիւն կ'ընէ: Ա-  
յու, կոյ մէկ հանդերձեալ քաղաք մը, կենդանի Աս-  
տուծոյ քաղաքը. կոյ մէկ երիխային Խրոսալիմ մը, և  
հրեշտակայ մեծ ընկերութիւն մը. կոյ մէկ ընկհանուր  
անդրանկաց ժողով մը որոնք երկինքը կենաց Գրքին  
մէջ զրուած են. Կոյ մէկ մէկ բաշտութիւն ոը որն որ մէկը  
չէնար համբել, բալը ողէներէն՝ ու շեշտերէն և ժողովրդունե-  
րէն՝ ու լըսաներէն որոնտ անուսն առջը ու Գառանուին առա-  
ջը իւսոց էն՝ ճէրմակ հանդերձեներ հաջած և յետերէն արհա-  
մենիներ բանած, և մեծայացն կ աղաղակն և ի ըսեն. Փրիս-  
տիւն մէր Ասուունոյ՝ որ անուսն վրայ կը նայի, ու Գառանուինը  
Ասոնտ որ ճէրմակ հանդերձեներ հաջած էն՝ ով էն, և մասից  
էկան: Ասոնտ մէծ նեղունենէ կոս գան, որ իրենց հանդերձնե-  
րը լըսացն, և զանոնտ Գառանուին արինովը ճէրմակունին: Ա-  
նոր համար Ասուունոյ անուսն առջն էն, և իրեն կը ծառայեց  
յորին՝ ու ժէշեր իր բանարին մշնը, և անուսն վրայ նոսողը իր  
վրանը պիտի ուրածէ անոնց վրայ: Այսուներու ու ովորի ա-  
նուսն ու ու ծառայեցն, ու ու արարու կոմ մէկ բանութիւն ու  
պիտի վրայ պիտի ինայ, զանոն զի Գառանուիը որ անուսն մէջն

է, պէտք հովուել շնորհած, ու հենդունէ ջուրերու աշխիքուելը պէտք առաջնորդու պահանձ, և Ասորուաշ բույր արյունանելքը պէտք արբէ անոնց առերկն . (Յայտ. հ. 9—17): Եղբարք, այսպէս է ուղևորին ճամբան չփառանը. այս է յաղ թութիւնը՝ երկար և խիստ պատերազմելէն ետեւ. խընդութիւն՝ արտմութենէ ետեւ, այս է անոնց հարուստ և առատ հունձքը՝ արյունքով սերմանած, լալով զային, պատուական սերմ բերին, և հիմա խնդութեամբ կու զան իրենց որաները հետերին բերած: Աւ աւելի ինչ ըսեմ, ասիկա է սրբոյ յատիսենական հանդիսար, ասիկա է անոնց երջանիկ վիճակն ու ժառանգութիւնը լուսայ մէջ, ասիկա է ան՝ Ու աչ չէ ուսեր, և ահանջ չէ լսեր, ու հարդու սրբին չէջ չէ ինչեր, Ասորուաշ շնորհ սերովներուն պատրուստեց: (Ա. Կորնթ. Բ. 9): Երանի թէ կարող ըլլայինք անդամ մը երկինքին ներսի զին եղած խաղաղաւէտ օմեանները տեսնելու: Ուրով որչափ պիտի կազդուրէինք և զօրանայինք մը ճամբարութեան մէջ, և որչափ պիտի մսիթարուեկինք քաջալերուած առաջ երթալու այն նեղ ճամբառն մէջ, որ որ ճամբարդութիւն ըրած: Ամէն շանքառնիւնը մը դրայէն Քիչէն յշէննէ: և մէն ուստած ուստարու մէջ+ը. ու հայերու նիւնով լուզնէն: Եթ առջւը ուրուստ ասպարէշն սնիւց+ը. (Երբ. Ժ. 1):

Տէրը՝ որ մեր տկարութիւնը կը ճանչայ, և կը չնորսէ առեն առեն իր հաւատացեալ ճամբորդներուն, գաւառ աշխարհին զբունիւններուն մէկ համար. (Երբ. Զ. 5): Առ աւելի մեծ փափաթ ունենան աճապարելով գէտ է

նպատակն՝ Յէսոսա Քրիստոսով Եղան Աստուծոյ վերէն հայտն բրանտին համանելու . (Փիլիպ. Գ. 14). և աւելի փութաջան վինառելու այն քաղաքը որ պիտի գայ:

Գ. Ինչու որ մենտ հոս հայուսն առաջ լունին, հապս համերէյւալ էը քնորուեն: Ի՞նչպէս պէտք է վինտուել այս քաղաքը որ պիտի գայ: Այս հարցման իրը պատասխան պէտք է որ աչքերինիս դարձըննք գէպ ՚ի այն ճամբան ուսկից քրիստոնեայ ուղևորը կ'երթայ: Մենք արդէն տեսանք թէ ասիկա նեղ ճամբայ մըն է: Եւ ինչու համար նեղ է: քանդի ապաշխատութեան և հաւատոյ ճամբան է: և աս ճամբան զգայասէր մարդուն՝ բնաւ. հաջոյական և ընդունելի չէ: Աս ճամբուն բերանը գուռ մը կայ, որուն համար ինքը Տէրն մըր Ցիսուն Քրիստոս կը վկայէ թէ անիկա նեղ է: Դրանը վրայ՝ թէ որ ինձ կը ներէք այլարանօրէն խօսիմ, սա խօսքը կը կարգանք: Ապաշխատեցիւն ու դրայէն եկէ+. (Գործ. Գ. 19):

Թէ որ մէկը ՚ուշէ իւս ետք ուստանայ: և ամէն օր իւ իւստ վերցնէ, ու իւ ետքէ գայ: (Ղուկ. Թ. 23): Ասանկ մէկ գոնէ մը որ զէպ ՚ի նեղ և զժուարին ճամբան կը տանի, շատերը թիկունքնին կը դարձըննեն: Այսափսի մարդիկ չեն յօժարիր զինովին մեղաւոր սեպուելու ինչպէս որ իրօք անանկ են, նաև իրենց հոգիներուն փրկութիւնը՝ իրեւ մէկ ձրի և զերագյն շնորհայ պարզե: մը ընդունելու:

Անոնք կը կարծեն թէ՝ սակաւ ինչ ունին այն արդարութիւնը և արժանաւորութիւնը որ կարող կ'ընէ զիւրենք բարեփաշտ տրամաթեան և ապաշխարութեան նեղ:



դրանը առջևէն անցնելու և կենաց Ճամբան մտցընելու՝  
ուրիշ դռնէ մը : Քայց չկայ ուրիշ դռւա մը , և ոչ  
ալ ուրիշ անցք մը հանդերձեալ քաղաքը մասնելու :  
Ամենքն ալ աշխարհիս ստեղծուելէն 'ի վեր աս Ճամ-  
բէն գացին , ամենքը հիմա ալ անկէ կ'երթան , ամենքն  
ալ ապաշխարութեան այս նեղ դռնէն ներս մասձ  
են : Եւ ինչպէս որ դռւոր նեղ է , անանկ ալ հաճան  
նեղ է . մեր Փրկչին յայտնի ըսածին , և բոլոր Ճշմա-  
րիս քրիստոնէից փորձառութեանը համեմատ :

Ճշմարիս և սրտանց զղջումը՝ վայրկենական գործ  
մը չէ , այլ անիկա քրիստոնէին կենացը մէջ մինչեւ  
վերջը պիտի շարունակուի : Վասն զի քրիստոնեան թէ-  
պէտե ազատուած է մեղքին իշխանութենէն բայց ա-  
նիկա գեր բոլորովին ազատ չէ անկէ մասցած ապակա-  
նութիւններէն : Նա՛ ոչ միայն ջարձի եկած և զղջա-  
ցած անառակին է՝ որ ապաշխարութեան արտասուք կը  
թափէ , այլ նաև հաւատացեալ և հաստատեալ քրիս-  
տոնեայ է , որ և մեծ փափաք ունի կենաց Ճամբուն մէջ  
քալելու : Անիկա կը դռնէ ամեն օր մէկ օրէնք մը իր  
անդամներուն մէջ , որ իր մտացը օրէնքին դէմ կը մա-  
քառի , և շատ անգամ կ'ստիպուի աղաղակելով ըսել ,  
ի՞նչ ի՞նչ այս ե՞մ էն , ո՞ւ զի՞ս ո՞վո՞ւ աս մանաց-  
արքինէն . (Հոռովլ: Է. 24): Քրիստոնէին կենացը մէջ  
ապաշխարութեան և անձնուրացութեան կը թութիւնները  
ոչ երբէք դադրելու են , և որչափ նա շատ մօտենայ երկ-  
նից , այնչափ աւելի կ'ըլլայ նա՝ հոգեորապէս միշտ յօ-  
ժար ըլլալու հարկաւորութիւնը , և իր սիրու ու բաղ-

ձանքները Աստուծոյ և յաւիտեականութեան վրայ հաս-  
տատելու . նաև ապաշխարութեան կը թութիւններուն  
վրայ աւելցնելու է հաւատոյ կը թութիւնները , ու ա-  
սոնք գժուարին են :

Հաւատով՝ քրիստոնեան կը յաղթէ աշխարհի , մար-  
նոյ և սատանայի փորձութիւններուն , հաւատով՝ ձեռք  
կը ձգէ Յաւիտեական կեանուը որ իտաւած է . (Ա. Տիմ: Զ. 12): Հաւատով՝ կարող կ'ըլլայ աւելի աղէկ սեպել  
Աստուծոյ ժողովուրդին հետ չարչարուիլ , քան թէ մե-  
ղաց ժամանակաւոր զաւարձութիւնը վայելել՝ Քրիստո-  
սի նախատինքը՝ աշխարհիս բոլոր զամներէն վեր հարս-  
տութիւն համարելով : Հաւատով՝ կ'ըստանայ նա Աս-  
տուծոյ խոստմոնքը , հաւատով՝ կը քալէ այն յափ-  
տենական կենաց առաջնորդող նեղ Ճամբուն մէջ .  
արթուն է աղօթք ընելու մասին , և հաւատարմութեամբ  
իր պարտաւորութիւնները կը կատարէ : Մէկ խօսքով՝  
քրիստոնէին կեանքը հաւատոյ կեանք մըն է : Անիկա հոս-  
մայուն քաղաք մը չունի , անիկա օտարական մըն է և  
Ճամբորդ մը երկրի վրայ , և կը փափաքի լաւաղոյն  
զաւափի մը , որ երկնաւոր է . ուր աւել Աստուծած քա-  
ղաք մը սկարպատեր է անոր Ճամբար : Աս քաղաքը կը  
փնտուէ ան , անոր հաւատոյ աչքերը՝ զէպ 'ի ան քա-  
ղաքը կը նային . անիկա դէպ 'ի իր տունը երթալու պէս  
առաջ . կը փութեայ՝ երկնային երպասաղէմը , Ճամբուն  
վրայ այսպէս երդելով .

Արթնցիք ով հօգիս ջանք ըրէ անկասկած ,  
եւ փութով ել առաջ մի կենար դու թմրած .

Երկնաւոր ասպարեզ կը ինդրէ քոյդ նախանձ ,  
Որ անմահ թաղ գլխոյդ քեղմայ պատրաստած :

Այսպէս , սիրելի բարեկամ , քրիստոնեան կը փնտռէ քաղաք մը որ պիտի զայ : Գիտեմ որ այս երկնաւոր քաղաքը փնտռելու կարևոր նիւթին վրայօք շատ բան կրնայի խօսիլ . բայց այս քիչ խորհրդածութիւններս պիտի սեպուին մի միայն իբրև հարեանցի օրինակեալ յիշատակութիւն մը ուղերին՝ իր օրհնեալ հայրենիքը մատամբ ցոյցնելով անոր , և քաջալերել զայն՝ որ փնտռէ զանիկա , և անոր յատկացեալ ճամբով՝ այս ինքն զղջումով և հաւաքով փնտռէ : Միայն թէ մէկ խորհրդածութիւն մըն ալ կ'ուզեմ ընել որ է այս . Ան որ մինչև վերջը իւ համբերէ , անէւս պէտք աղբէ . (Մատթ. ժ. 22): Եւ առ մինչև իւ համ հաւատաբիւէ , իւնաց պատէր պէտք չնուռնէ . (Յայտ. Բ. 10):

Եղբայրներ՝ արժան է որ այս ինսաց պսակը պատերազմելով ձեռք բերենք . ինչ ունիք մնիք այս աշխարհիս մէջ՝ որ մեղ մեր յափենական ճամբուն մէջ քաջալերէ և միսիթարէ թէ որ այն օրհնեալ յափենական կենաց յոյար չըլլայ : Մենք օտարականներ և ճամբորդներ ենք հոս երիք վրայ , և մեայուն քաղաք չունիք , հապա հանդերձեալը կը փնտռենք : Եւ ո՛չ , որչափ միսիթարական բան է այս ունայն և անցաւոր աշխարհիս մէջ զիսնալը՝ որ Մէկ տառաւ մը իւայ , որուն մէջ բնաւ հանդերձեալ իւամ բարձաւը շրայ մը չիւայ . (Յակ. Ա. 17): Եւ անանկ քաղաք մը՝ որ յափենական հիմք

ունի , և որուն Ճարտարապետը ու արարիչը Աստուածէ : Ո՞րշափ քաղցր և միսիթարական է այս՝ քրիստոնեայ Ճամբորդին որ մէկ օլեւան մը ունի , օրհնեալ և յաւիտենական օթևան մը որ դէպ ՚ի հոն կը փութայ : Ինչ անողատմելի միսիթարութիւն է զիսնալ՝ որ այս աշխարհիս միրկայոյզ ովկիանսսին վրայ կայ մէկ նաւահանգիստ մը . ուր վերջապէս մնաք պիտի մանենք , և պիտի հանգչինք յափենան . այս յաւալից և մեղաւից կենաց փոփորկահար ալիքներէն :

Եղբարք , մեր բնարանին խօսքըը մեղի ալ յարմարցընենք , և զրակացութիւնը ընելիս առաջ : Բնաւ մեղմէ մէկը՝ հոս մեայուն քաղաք չունիք : Այսօր առողջութեան և մեր կենաց ձաղիկ հասակին մէջն ենք , բայց ամեննեին ասլահալութիւն չունինք թէ վաղն ալ այսպէս պիտի մնանք . վաղը կամ մէկ ամիսէն , կամ մէկտարիէն և կամ զոյէ քանի մը գիւրասահ տարիներ անցնելէն ետե , վերջապէս մահուան ան մեծ ժամը պիտի զայ : Եւ ինչ կը կարծէք դուք թէ պիտի զդաք այն ժամուն մէջ : Ինչ պիտի զդաք երբ մահուան անկորհոյն վրայ պառկած՝ մեր բազկին զարկը շուտ մը կենաց ու ալ չը զարնէ , երբ մեր աչքին լցուը մութ խաւարով մը ծած կուի , և մահուան ցուրտ քրտինքները հոգիին տագնապը յայտնէ , որ նա կ'ելիէ ու կը թուշի հոգիներուն յափենական աշխարհին մէջ :

Եղբարք , մահուան ժամը մեծ ժամ մըն է , բայց ալ աւելի մեծ է յափենականութիւնը որ անոր ետեէն կու կու զայ : Մենք հիմա անոր վրայօք մատղիր չենք ,

բայց ասիկա ճշմարիխ է որ մահը ու յախանականութիւնը, երևելի և աշարկու բաներ են: Մենք չիմակենաց միսիթարութիւնները կը վայելենք, որոնք շուտ մը կ'անցնեն. Ինչու որ բան մը չբերին+ աշխարհ, այսորոնի է որ չնշ+ ինառ անէէ բան ու դանէլ. (Ա. Տիմոթ. Զ. 7): Մահը՝ մեզ պիտի զրկէ բոլոր երկրաւոր միսիթարութիւններէն և թէ որ մենք զանձած չենք՝ մեզի համար զանձ մը երկինքին մէջ, ինեղք և ողբրմթի պիտի մնամք յախտեանս:

Եղբարք, մենք պիտի մեռնինք, բայց մեր հողիները անմահ են, երբէք պիտի շմռնին այլ յախտեան ապրելու են, և այս հոգիները կարօտ են փրկութեան: Ասուծոյ յախտենական Որդին Քրիստոս՝ յերկնից իշտ մեր անմահ հոգիները փրկելու համար: Կ'ուզե՞նք փրկել զանիկայ, կ'ուզե՞նք որ երջանիկ մեռնինք. կ'ուզե՞նք որ միսիթարութիւնը մահուան ժամուն մէջ, կ'ուզե՞նք որ յախտենական կեանքը մաննիք, կ'ուզե՞նք որ ընդունուինք լշակ մէջ բնակուուր սուրբերուն զինակն ժանակուց բաւարար արժանանաւ. (Կող. Ա. 42): Վ'ուզե՞նք որ հանդինք մեր պանդխտութեան նեղութիւններէն և վասանդներէն՝ երկնից խալալաւէա օթեաններուն մէջ: Ո՛չ, ո՛վ չուզե՞ր ասնք: Բայց հոգ կ'ընե՞նք միթէ աս բաներուն վրայօք, կը փնտու՞նք արգեօք այն երկնային քաղաքք: Այս մեղսալից աշխարհը դառնացած է մեզի իր ամեն զրօսանքներովը և աղմուկներովը: Մեր սիրան ու յօժարութիւնները երկնային բաներու վրայ գրած ենք, կը փնտու՞նք այն վերին բաները, Ա-ր որ քրիստոս է

Նարի Ասուծոյ աջ կոչը (Կող. Գ. 1): Կը մասնե՞նք աննեղ Ճամբան զղջումով, և կը քալե՞նք հաւատքով աննեղ Ճամբուն մէջ՝ որ մեղ կ'առաջնորդէ դէպ'ի յարիտենական կենաց: Կը հրաժարինք աշխարհէն և անոր մէջն եղած բաներէն աշքի, մարմնոյ ցանկութիւններէն, և այս կենաց հպարտութենէն: Մեր ուրախութիւնը Տէրոջը վրայ է, և անիկա՞է մեր Փրկիչը ու զօրութիւնը: Սուրբ և քաղցր հազորդակցութիւն մը ունինք Աստուծոյ հեա ազօթքի մէջ: Անոր խօսքը Ճրակ է մեր սոտքերուն և լցո մեր շաւզացը: Ամեն օր՝ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի շնորհաց և զիտութեանը մէջ աճիլ կը խնդրե՞նք: Անոր քաղցր լուծը՝ նաև թեթև բեռը վրանիս առած ենք: Մէկ խօսքով՝ մեր ընթացքը դէպ'ի երկինք կ'առաջնորդէ զմեղ: Եղբարք՝ Փորձեցէ+ յէր անձեւը նէ հաւատքին մէջ է+, հնեցէ+ յէր անձեւը. (Բ. Կորնթ. Ճ.Գ. 5): Եւ թէ որ գուք քննելու ըլլը լաք, և չկրնաք ստորասական կերպիւ աս ամեն հարցւմանց պատասխանել — կանկ առեք մէջ մը ձեր Ճամբուն վրայ, ու մաիկ ըրեք շնորհաց ձայնին՝ որ զձեղ զշման կը հրաւիրէ: Փութացէք որ ձեր հոգիները փրկուին գեռ Տէրոջը օրը զիշերուան դողի պէս ձեր վրայ հսասած, (Ա. Թեսալ. Ե. 2):

Եւ ինչ ըսեմ անսնց՝ որ խաղաղութեան և կենաց Ճամբուն մէջ քալելու պատրաստ են, նաև կը փափաքին փնտուել այն քաղաքը որ պիտի գայ: — Մատիկ ըրեք ինչ կը զրէ երանելին Պողոս Թեսաղնիիկի քրիստոնեայ Ճամբորդներուն:

Ապէն արքէն առափի եղէի։ Անդադար աշօնիւ ըթէի։ Ազն  
բանի մէջ բոհութիւն առաւել, ինչու ո՞յ այս և Աստվածայ կամ  
+ը Քրիստոս Յիսուսունը յէր վրայ։ Սուրբ Հոգին մէ հացէի։  
Մարտիրոսունիւնները մէ արհամարտէի։ Ապէն բան հայլեցէի,  
Բարին ամուս բանեցէի։ Ապէն ամսակի ինչ բաններէն եւր իլոցէի։  
Եւ ինչը խաղաղութեան Աստվածածնը և Բարբարին սուրբ ընէ,  
— յէր բալը հոգին և շոնչը ու մարմինը անարտար պահուակ մին-  
ւ մէ Տէր Յէսուս Քրիստոսի բալը ապէնը։ Հաւատարիւ և  
— ու յէր իւնէց, ո՞յ ինչը պէտի կառարէ ալ։ (Ա. Թեսաղ-  
և. 16—24)։



1238



1238

bx

1224